մանքներին և Մայր աթոռի ազգատիկ միջոցներին, հաստատամտութեամբ ձեռնամուխ եղաւ այն ծրագրի իրագործման, որ մշակել էր իւր բեղմնաւոր, լայն մտքում։ Նախ վանքը մի քարաշէն պարսպով պատեց, յետոյ Էջմիածնում և շրջակայքում այլ և այլ շէնքեր հիմնեց, մի թղթի գործարան և մի տպարան հաստատեց. այնուհետև պաշտպան հանդիսանալով մեր եկեղեցու դաւանութեան ու ճշմարտութեան՝ սկսաւ աստուածաբանական գրքեր լոյս ընծայել կաթողիկների քարոզչութիւնների դէմ, որ տարածու�էր հայերի մէջ։ Իբրև վարչական անձն կարգ ու կանոն մտցնելով ամեն տեղ, խստիւ պատժում էր զանցառուներին և միևնոյն ժամանակ զօրացնում Էջմիածնի գերագահութիւնը Գանձասարի և միւս մասնաւոր հակաթոռ կաթողիկոսների վերայ։ Այսպիսի գործունէութեամբ կարճ միջոցում վստահութիւն ու հռչակ ստացաւ հայերի մէջ, և ժրաջան կաթողիկոսին համակրող ազգը չզլացաւ նիւթապէս օգնել նրան յօժարակամ նուէրներով։ Սիմէոնի ժողովրդականութիւնն ու ազդեցութիւնը միայն իւր հօտի մէջ չէր սահմանափակուած, նրա աջակցութեան դիմում էին թէ վրաց Իրակլ թագաւորն և թէ հարևան խաները, և նա իւր միջամտութեամբ քանիցս անգամ հրկիրը փրկեց Երևանի խանի սպառնացած աղէտներից և աւերմունքից։

Անտարակոյս մի նշանաւոր քաղաքագիտական գործ էր Սիմէոն կաթողիկոսի ռուսաց կառավարութեան դիմելը և առաջին անգամ պաշտօնական յարաբերութիւններ հաստատելը Պետերբուրգի դրան հետ։

Դեռ Պետրոս Մեծի ժամանակից ի վեր հայ ազգի մէջ արմատացած էր այն համոզմունքը, թէ Ռուսաստանը կըփրկէ նրան մահմեդական տիրապետութեան դարևոր լծից. այդ ակնկալութեամբ Սիմէոնի նախորդ Ցակոբ կաթողիկոսը 20 յուլիսի 1760 թ. դիմած էր ռուսաց կայսրին մի ուղերձով, որի մէջ խնդրում էր «զազգն մեր ողորմելի և զազգն վրաց հոգալ»։ Սակայն այդ ընդհանուր և անորոշ խօսքերով արտայայտուած խնդիրը ոչ մի հետևանք չունեցաւ, մանաւանդ որ ժամանակի պարագաներն էլ նրա յաջողութեան ձեռնտու չէին։

Աւելի շրջանկատ ընթացք բռնեց այդ գործում դերելջանիկ Սիմէոնը, մանաւանդ որ մի յարմար առիթ էլ ունէր ռուսաց կառավարութեան դիմելու։—Աժտարխանի հայերը թօթափել էին Մայր Աթոռի իրաւասութիւնը և Գանձասարի կաթողիկոսի իշխանութեան տակ մտել։ Սիմէոն հայրապետն այդ